ՎԵԴՈՒ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

01.03.2019 - 30.12.2019 ԹԹ ԿԱՏԱՐՎԱԾ
ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՈՂ՝ / /Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մանկապարտեզի աշխատանքները սկսվել են 2019 թ-ի մարտի 1-ից : Գործել է 5 տարիքային խումբ `/ավագ ,,ա,, ավագ ,,բ,, , միջին, կրտսեր 2-րդ , կրտսեր 1-ին/, ցուցակային ունեցել ենք `196 երեխա :

Երեխաների միջին հաճախելիությունը տարվա ընթացքում ` 145 երեխա :

Առաջնորդվելով ուսումնական տարվա առաջնահերթ խնդիրներով շարունակվել են աշխատանքները բարձր մակարդակով իրականացվել:

Նոր հաճախող երեխաների ծնողների հետ կնքվել են պայմանագրեր :

Ըստ ուսումնական տարվա տարեկան աշխատանքային պլանի, որը հաստատվել է քաղաքապետարանի կողմից , իրականացվել է 3 մանկավարժական խորհրդակցություն ,5 մեթոդ ժամ , 2 սեմինար պրակտիկում , 2 ընդհանուր և 4 խմբակային ծնողական ժողով :

Պարբերաբար մեթոդիստի հետ միասին վերահսկվել են դաստիարակների աշխատանքային փաթեթները ,իրականացվել են օպերատիվ, թեմատիկ և հանրագումարային ստուգումներ :

Անցկացվել են միջոցառումներ ՝ թեմատիկ և ոչ թեմատիկ տարբերակով ՝ <<Մայրություն>>, <<Սուրբ զատիկ>>, <<Ծիածան>>,ավարտական միջոցառում՝ << Աշխարհի 7 հրաշալիքները>> ,կազմակերպվել է մրցույթային խաղեր ՝ <<Ձեզ տեսնենք մայրիկներ >>, <<Վիտամինային բանավեճ >>, <<Գտնված երազ >>, <<Հունիսի 1-ը մանկապարտեզում>>թեմաներով, անցկացվել է նաև սպորտլանդիա ավագ և միջին խմբերի միջև:

Ավագ խմբում անցկացվել է <<Ճանապարհային երթևեկության կանոնները>>փոքրիկ միջոցառում , որի նպատակն է ստուգել երեխաների գիտելիքները փողոցի երթևեկելի մասի անցման , ստորգետնյա անցման , լուսակիրի ազդանշանի ներքո ՝ հետիոտնի անցում նշանի կանոնների մասին :

Սիստեմատիկաբար իրականացվել են էքսկուրսիաներ բնության գրկում, մասնակցություն ենք ունեցել մշակույթի տանը անցկացվող մանկական միջոցառումներին:

Մեծ է եղել բուժքրոջ դերը մանկապարտեզում և կիսամյակային կտրվածքով երեխաների առողջական վիճակը դրված է բավարար հիմքերի վրա.

-Մանկապարտեզում անցկացվել են կյանքի առողջության պահպանման ուղղությամբ խորհրդատվություններ

-Ամսեկան տրվել է վերլուծություն երեխաների հիվանդության վերաբերյալ

-Պլանավորվել և կազմակերպվել է աշխատակիցների պարբերաբար բուժզննությունը

-Համագործակցվել է պոլիկլինիկայի հետ համապատասխան անտրոպոմետրիկ չափումներ , կանխարգելիչ պատվաստումների իրականացման և գրառման գործում

Շաբաթական կտրվածքով անցկացվել է սննդի նորմերի վերլուծություն /պահպանվել է երեխաների համար անհրաժեշտ սննդանյութերի էներգետիկ արժեքը `կալորիականությունը/,որը ամբողջական տեսքով փակցված է մանկապարտեզի տեղեկատվական վահանակին ,իսկ ամենօրյա սննդի ճաշացուցակի մեկ օրինակը փակցված է ծնողների համար տեսանելի տեղում: